

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**1947 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԱՍ-  
ՆԱԳԻՏԱՅՑՎԱԾ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆ-  
ՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ԿԻՅ ՎԵՐԱՊԱ-  
ՆՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱ-  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 սեպտեմբերի 2010թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող),  
Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիանիսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական  
դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ  
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1947 թվականի նոյեմբերի  
21-ին Նյու Յորքում ստորագրված՝ Մասնագիտացված գործակալությունների արտո-  
նությունների եւ անձեռնմխելիությունների մասին կոնվենցիայում (կից վերապահու-  
մով) ամրագրված պարտավորությունների՝ Նայաստանի Նանրապետության Սահմա-  
նադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքա-  
գրված 2010 թվականի օգոստոսի 27-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Նանրապետության  
Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ արտաքին գործերի նախարարի  
փեղակալ Ա. Կիրակոսյանի բացատրությունները, հեղափոխելով կոնվենցիան եւ

գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՄԱԿ-ի Մասնագիտացված գործակալությունների արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին կոնվենցիան ստորագրվել է 1947 թվականի նոյեմբերի 21-ին՝ Նյու Յորքում: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1948 թվականի դեկտեմբերի 2-ին: 2010թ. օգոստոսի 10-ի դրությամբ կոնվենցիային անդամակցել է 118 պետություն:

Նայասրանի Նանրապետության կողմից կոնվենցիան ստորագրվել է վերապահումով, ըստ որի՝ կոնվենցիայի VI հոդվածի 20-րդ բաժնի դրույթները չեն փարաձվում Նայասրանի Նանրապետության քաղաքացիների վրա:

2. Կոնվենցիան բաղկացած է 11 հոդվածներից՝ 49 բաժիններով եւ դրա անբաժանելի մաս կազմող 18 հավելվածներից: Յուրաքանչյուր հավելված վերաբերում է ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություններից մեկին: Դրանք են՝ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Արժույթի միջազգային հիմնադրամը, Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, Նամաշխարհային փոստային միությունը, Նեռահաղորդակցության միջազգային միությունը, Փախստականների միջազգային կազմակերպությունը, Նամաշխարհային օդերեւութաբանական կազմակերպությունը, Միջազգային ծովային կազմակերպությունը, Ֆինանսների միջազգային կազմակերպությունը, Զարգացման միջազգային ընկերակցությունը, Մրավոր սեփականության միջազգային կազմակերպությունը, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը, ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպությունը, Տուրիզմի համաշխարհային կազմակերպությունը, ցանկացած այլ գործակալություն, որը Կանոնադրության 57 եւ 63-րդ հոդվածներին համապատասխան առնչվում է ՄԱԿ-ին:

3. Կոնվենցիայով սահմանվում է, որ ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություններն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, իրավասու են կնքելու պայմանագրեր, ձեռք բերելու եւ փոխանցելու շարժական ու անշարժ գույք, ներկայացնելու դատական հայցեր: Մասնագիտացված գործակալությունները, նրանց շինությունները, սեփականությունը եւ ակտիվները, արխիվներն ու փաստաթղթերն օգտվում են անձեռնմխելիությունից, ներառյալ՝ դատական միջամտության ցանկացած փեսակից, ազատվում են բոլոր փեսակի ուղղակի հարկումներից կամ մաքսային պուրքերից, ներմուծման եւ արտահանման արգելքներից եւ սահմանափակումներից:

Մասնագիտացված գործակալությունների աշխատակիցներն ու նրանց ընտանիքների անդամներն օգտվում են նույնպիսի արտոնություններից ու անձեռնմխելիություններից, որոնք տրամադրվում են դիվանագիտական առաքելությունների անդամներին: Մասնագիտացված գործակալությունների պաշտոնյաներն ու նրանց ընտանիքների անդամներն օգտվում են նույնպիսի արտոնություններից ու անձեռնմխելիություններից, որոնցից օգտվում են ՄԱԿ-ի պաշտոնյաները:

**4. Նայաստանի Նանրապետությունն անդամակցելով կոնվենցիային՝ ստանձնում է հետևյալ պարտավորությունները.**

- մասնագիտացված գործակալությունների, դրանց շինությունների, սեփականության եւ ակտիվների, արխիվների ու փաստաթղթերի նկատմամբ, անկախ դրանց գտնվելու վայրից եւ տնօրինողից, ապահովել կոնվենցիայով նախատեսված արտոնություններն ու անձեռնմխելիությունը, ներառյալ՝ դատական ցանկացած միջամտությունից, խուզարկությունից, բռնագրավումից, սեփականագրկումից եւ ցանկացած այլ միջամտությունից զերծ պահելը, բացառությամբ որեւէ հատուկ դեպքի, երբ նրանք հստակորեն հրաժարվում են այդ անձեռնմխելիությունից,

- մասնագիտացված գործակալությունների պաշտոնյաներին ու նրանց ընտանիքների անդամներին օժտել նույնպիսի արտոնություններով ու անձեռնմխելիությամբ, ինչպիսիք տրամադրվում են դիվանագիտական ներկայացուցչությունների անդամներին կամ ՄԱԿ-ի պաշտոնյաներին ու նրանց ընտանիքների անդամներին,

- մասնագիտացված գործակալությունների անդամների ներկայացուցիչներին (պատվիրակությունների անդամներին, նրանց փոխարինողներին, խորհրդատուներին, տեխնիկական փորձագետներին ու քարտուղարներին) եւ նրանց ամուսիններին ու խնամակալության տակ գտնվող անձանց օժտել կոնվենցիայով նախատեսված արտոնություններով ու անձեռնմխելիությամբ, ներառյալ՝ դատական ցանկացած միջամտությունից զերծ պահելը,

- մասնագիտացված գործակալությունները, նրանց ակտիվները, եկամուտը եւ այլ սեփականությունը, ինչպես նաեւ դրանց պաշտոնյաներին, անդամների ներկայացուցիչներին ու ընտանիքների անդամներին ազատել բոլոր տեսակի ուղղակի հարկումներից կամ մաքսային տուրքերից, ներմուծման եւ արտահանման արգելքներից եւ սահմանափակումներից, մասնագիտացված գործակալությունների կողմից վճարվող աշխատավարձն ու վարձարժեքները՝ հարկերից նույն պայմաններով, որոնցից օգտվում են ՄԱԿ-ի պաշտոնյաները, ապահովել նրանց գույքի, ունեցվածքի եւ այլ սեփականության անձեռնմխելիությունը,

- երաշխավորել մասնագիտացված գործակալությունների պաշտոնյաների իրավունքը՝ օգտագործելու ՄԱԿ-ի անցագրերը՝ որպես ուղեւորական վավեր փաստաթուղթ, նրանց փրամադրել ուղեւորության համար նախատեսված նույն պայմանները, ինչպիսիք փրամադրվում են դիվանագիտական ներկայացուցչությունների անդամներին,

- մասնագիտացված գործակալություններին իրենց պաշտոնական հաղորդակցությունների համար ՆՏ փրամադրում փրամադրել ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան այն պայմանները, որոնք Նայաստանի Նանրապետության կառավարությունը փրամադրում է ցանկացած այլ պետության կառավարությանը, ներառյալ՝ վերջինիս դիվանագիտական ներկայացուցչություններին,

- մասնագիտացված գործակալությունների պաշտոնական գրությունները եւ այլ հաղորդակցությունները չենթարկել գրաքննության եւ այլն:

5. Կոնվենցիայով նախատեսվում է արտոնությունների չարաշահման եւ սույն կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված փրամաձայնությունների դեպքում Մասնակից պետության եւ համապարասխան մասնագիտացված գործակալության միջեւ խորհրդակցությունների անցկացում կամ վեճերի կարգավորում՝ Արդարադատության միջազգային դատարան դիմելու միջոցով:

6. Կոնվենցիայում նախատեսված են եզրափակիչ դրույթներ՝ Մասնակից պետության համար կոնվենցիայի կամ դրա հավելվածների ուժի մեջ մտնելու, կոնվենցիայի վերանայման վերաբերյալ:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ քննության առարկա կոնվենցիայի մի շարք դրույթներ արդեն իսկ պարտադիր իրավաբանական ուժ են ձեռք բերել Նայաստանի Նանրապետության համար այն փաստի ուժով, որ ՆՏ մասնակցությամբ մի շարք այլ միջազգային պայմանագրերում, մասնավորապես՝ «Ադերի մեղմացման եւ օգնության ցուցաբերման նպատակով հեռահաղորդակցական ռեսուրսների փրամադրման մասին» Տամպերեի 1998 թվականի հունիսի 18-ի կոնվենցիայով, ՆՏ կառավարության եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջեւ 2005 թվականի փետրվարի 24-ին ստորագրված՝ «2005-2009թթ. համագործակցության ծրագրի գործողությունների պլանով» Նայաստանի Նանրապետությունը պարտավորվել է կոնվենցիայով նախատեսված արտոնություններն ու անձեռնմխելիությունների գործողությունը փրամադել որոշակի իրավահարաբերությունների վրա:

ՆՏ կառավարության եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջեւ 2005 թվականի փետրվարի 24-ին ստորագրված՝ «2005-2009թթ. համագործակցության ծրագրի գործողությունների պլանի» համաձայն, մասնավորապես, Նայաստանի Նանրապե-

ությունը պարավորվել է կիրառել քննության առարկա կոնվենցիայի դրույթները ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի սեփականության, միջոցների եւ գույքի, ինչպես նաև պաշտոնյաների եւ խորհրդատուների նկատմամբ՝ չանդրադառնալով վերջիններիս քաղաքացիության հիմնահարցին: Այս առումով, ՏՏ կողմից քննության առարկա կոնվենցիայի հոդված VI-ի բաժին 20-ի նկատմամբ նման վերապահում կատարելու մտադրությունը սահմանադրաիրավական տեսանկյունից առավել քան հիմնավորված է եւ թույլ է տալիս ապագայում խուսափել հնարավոր հակասահմանադրական իրավիճակների առաջացումից:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ ՏՏ մասնակցությամբ վերը հիշատակված միջազգային պայմանագրերի վավերացմամբ քննության առարկա կոնվենցիայով սրանձնած պարավորությունների ծավալն ավելի լայն է, քան բուն կոնվենցիայով (կից վերապահմամբ) սրանձնելիք պարավորությունների ծավալը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1947 թվականի նոյեմբերի 21-ին Նյու Յորքում ստորագրված՝ Մասնագիտացված գործակալությունների արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին կոնվենցիայում (կից վերապահումով) ամրագրված պարավորությունները համապատասխանում են Նայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**